

ՄԱՍԻՍ

ՀԱՆԳԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՍՍԵՆ ՅԱՐԱԹ ՕՐ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԱԿՐԱՊԵՏ
ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պոլիս եւ Գաւառներ
Ռուսաստան
Եւրոպա

40 Ղրուշ
4 Բուպի
10 Ճրանք

ՀԱՍՏԵ

Ղալաթիա, Իզմիրի Օղլու խան, րիս 3-4

ԱՆԳԻՐ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԵՒ ԱՌԱՅԻՐ

Վահան վարդապետ Տ. Մինասեան հայ գրականութեան մէջ նորեկ մը չէ. կրօնական նիւթերու վրայ շատօնց կը գրէ օրագիրներու մէջ. ընթերցողները, հարկաւ, մեծ բան մը հասկցած չեն այդ երաշխեցերէնով, գրաբարով եւ Սրբազան պատմութիւնով համեմուած գրուածներէն. բայց Վահան վարդապետ մէկէ աւելի լար ունի իր աղեղին վրայ. ամենքը ախորժանօք կարգա ին իր անձնական յիշատակները այնքան մտադի ու զուարթախոհ ոճով մը գրըռած, նորք ու մ'շտ ճաշակաւոր հեղինակութեամբ մը՝ վայելչապէս խառնուած:

Վահան վարդապետի կատակասէր եղանակը հաճելի է ինծի. և պէտք է խոստովանիլ որ այս սեւը ամենէն դժուարինն է գրականութեան մէջ:

Այս անգամ առակներու շարքով

մը այս գրագէտը հրապարակ կ'ելլէ և բարեբաղդ զարաուղութիւն մը բերելով մեզի՝ իր բարոյախօսութիւնը անձուկ ու աղայական բան մը չէ:

Այս առակներով տրուած խրատները՝ մարդկային կեանքի ամեն կերպ երեւոյթները կ'ընդգրկեն միշտ, և ամբողջութիւն մը կը ներկայացնեն որով բարոյականը կը գտնէ վերստին իր մեծութիւնը ու բարձրութիւնը՝ զորս կորսնցնելու մօտ էր մէկ երկու հրապարակագիրներու սեղմուած հասկացողութեանը մէջ:

Այս իսկ պիտի բաւէր որ շնորհաւորէինք հեղինակը. բայց այս գիրքը աչքէ անցունողները անկէ գոհ մնալու դեռ ուրիշ շատ պատճառներ պիտի ունենան:

Վարդապետը համբաւաւոր է արդէն իր սրախօսութիւններովը՝ յատկութիւն մը զոր մեր գաւառացիները ընդհանրապէս այնքան ունին և որուն քով Պոլսեցւոյ խօսակցութիւնը՝ ճշմարիտ տափակութիւն մըն է միայն:

Վահան վարդապետ իր համբաւին

արժանի կերպով գրած է այս գործը, այնքան նրբամտութեամբ որ, եթէ վարդապետ չլլար, պիտի ըսէի թէ սատանի չափ խելք ունի հեղինակը:

Անոնք որ անհամ գառախօսութիւններով հանրութիւնը հրահանգելու յաւակնութիւնը ունին, թող ձեռքերնին չառնեն այս գիրքը որ խնդացնելով, զուարճացնելով խրատելու ուսմանուած է:

* * *

Վահան վարդապետի գործը՝ բոլորովին հայկական համ ու հոս ունի. ֆրանսական գրականութենէն մուրացածոյ ոճեր՝ մուտք չունին իր գրքին մէջ. ընդհակառակը իր լեզուն՝ շարունակ գեղջուկ ու պարզ խօսուածքն է գիւղացիին:

Տեղ տեղ բարեյիշատակ Սրուանձատեանց եպիսկոպոսը կը յիշեցնէ և կ'ըզատ որ նոյն սիրտն է գուցէ որ կը բարախէ հոս ալ, թէեւ ոչ այնչափ արտիուն:

Ահա այս ինքնատիպ և իսկապէս հայկական դրականութեանը համար՝ Վահան վարդապետի գործը յիշատակութեան արժանի է այնքան աւելի որքան հայերէն գրողներուն ու հայերէն զգացողներուն թիւը երթալով կը նուազի, մեր գիւղացիի անկեղծ խնդուքին ու բարեմիտ չատակին տեղ՝ ֆրանսական անմիտ blague կ'անցնի:

Այս հանգամանքներով, վարդապետին գիրքը կը յանձնարարենք իղմրեանցի մրցանակի յանձնաժողովին, որուն գէմ անճահ կերպով ստեն ատեն յայտնուած գանդատները չեն կրնար սքողել սա ակներեւ ճշմարտութիւնը՝ որ մինչեւ ցարդ եղած բոլոր բաշխումներով արժանիքը վարձատրուած է միայն:

Հռովմէական վարդապետներ կըրնան պատմական ուսումնասիրութիւններ ընել առանց վիրաւորելու մեր հա-

մողունները՝ որոնք իրենց ենթագրական ստուգութիւններուն չափ գոնէ յարգելի են:

Այսպէս, բուն ազգին զգացման թարգման եղած է Գանձնաժողովը չի վարձատրելով այն գիրքերը, որոնք պատմական հետազօտութեան պատուակի մը տակ, մեր ամենէն նուիրական համողունները խախտելու կը միտէին:

Իղմրեանց մրցանակը համաշխարհային գիտութեան համար հաստատուած մրցանակ մը չէ. էսպէս ազգային-գրական այս պատկը ճշմարիտ ու անկեղծ ազգային գրուածքի մը ճակատը միայն կրնայ գրուիլ. և ահա այս պատճառով Վահան վարդապետին գործը անժխտելի իրաւունք ունի զայն ստանալու:

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

ՏԻԿՆԱՅՔ ՓԱՓԿԱՍՈՒՆՔ...

Դպրոցատէր Տիկնանց կըթարանը, իր սովորութեանը համեմատ, աս տարի ալ կուտայ գաւառներուն իր վարժուհիներէն:

Հաստատութիւնը այնչափ գործով ու զուրգուրանք կ'արթնցնէ առաջին նայուածքով, որ քննականի պէս բան մը գըրելու կը վախնայ մարդ, մէկ խօսքով՝ չեղածէն եղած մըն է կիներու և աղջիկներու շնորհիւ, և որ, գեղեցիկ սեռի ընդհանուր անգործութեան մէջ, յարատեւ զբաղմունքի նիւթ է քանի մը կիներու և աղջիկներու: Բայց երբ քննականն իր սահմանէն դուրս չէ, գործովն ու զուրգուրանքին մէջ ալ կրնայ մտնել, մատղաշ գէմքի մը վրայ դրօշմուած առնական համբուրի պէս: Կարծեմ թէ ալ հարկ չկայ ըսել որ քննականիս ներողութիւնը այժմէն առած եմ:

Տիկնանց դպրոցը, իր գծած որոշ նը-

պատակովը, կը տարբերի համասեռ բոլոր դպրոցներէն, — հասարակական խառնուրդովը Աս որոշ բաժանումը, հարկաւորաբար, ծրագրին մէջ կ'ստեղծէր կարգ մը պարտականութիւններ, ուսկից ազատ են բոլորովին մեր ուրիշ կրթարանները: Աս բաժանումը կա՞յ, ահա ինչ որ քննականի նիւթ կրնայ ըլլալ կարգ մը տեսութիւններով:

Ո՛րչափ ալ ի մօտոյ չօգտած չհամարուիմ դպրոցին ծրագիրն ու դպրոցականներու մօտաւոր վիճակը տարեկան քննութեանց օրեր, դուրս ելած վարժուհիներուն համար կրնանք ըսել, թէ անոնք իրենց դպրոցական միւս քոյրերու պէս են, նոյն ձեւով պատրաստուած և վիճակակից նոյն մօտաւորական զարգացմանը: Տիկին Մատակեան թաղային վարժարաններէն եկած աղջիկներուն քով գտած է այնչափ ոյժ որչափ նաեւ Դպրոցասիրացներու քով: Մանկապարտէզներու համար պատրաստած առաջին աղջիկները դպրոցասիրացին աղջիկ-վարժուհիներուն վարժիչ եղան ոչ միայն նոր դրութեան մը ընտելութեանը մէջ, այլ թէ ինչպէս պէտք է ուսուցանել: Ասոնք կրնամ հաստատել: Եւ եթէ հրապարակի մէջ տեսնուած մեր աղջիկներուն մանր մանր գրուածներն ալ ի նկատի առնենք համեմատութեան մօնելու, Դպրոցասիրաց դպրոցականներուն գոյութիւնն անգամ չենք գտներ:

Մեծ պարագայ մը հաստատելու համար չէ որ աս վերջինը մէջ կը բերեմ, բայց և այնպէս ինքնին կ'ստիպուինք մտածել որ ցայսօր զրկուած աղջիկ-վարժուհիները, իրենց գաւառական կեանքէն, տեսած փորձութիւններէն բան մըն ալ չբերին մեզի իրբեւ հաւաստիք իրենց սըրտին, մտքին, ճաշակին ու վշտերուն կամ հրճուանքին: Ձըսին մեզի թէ ինչ բան նպաստեց իրենց յօժողութեանը, կամ թէ ընդհակառակն, ինչ բան պատճառ եղած է շատ անգամ իրենց ձախողութեանը: Աս գրուածքները, միւս կողմէն, լրագրութեան ալ մեծ նպաստ կ'ըլլային՝ գաւառական դպրոցներու ընթացքն ուղղելու համար: Ասոնցմէ դուրս՝ աս Պոլսեցի ըզգայուն աղջիկները, իրենց կրթութեամբը,

իրենց ընդունակ ջիղերովը, երբեք չգոցին բան մը իրենց գաւառացի մայրիկներու և քոյրերու մօտին: Ձէի՞ն կըրնար անոնց կեանքէն հատուածներ տալ մեզի՝ զգացած սրտերով ու չօգտած մատներով, սրտայոյզ հատուածներ, որոնք՝ աղքատին ողորմութիւն տալու աւետարանական յորդորակներու չափ՝ կրնային ազդու ըլլալ Պոլսեցի տիկիններուն և յանուն գրութեան՝ աղքատին ձեռքը զրամիկ մը ձգելու ողորմելի ողորմութեան տեսութիւնն ընդլայնել անոնց քով: Ասոնց ոչ մին տեսնուեցաւ. և գուցէ առարկուի որ Դպրոցասիրացին վարժուհիները համեստ են հին համեստութեան ըմբռնումով: Այն ատեն թո՛ղ զրեն իրենց տիկիններուն և անոնք ալ մաս մաս տան մեզի մրցանակի օրը, և մենք ալ շնորհապարտ սրտով կ'ընդունինք զանոնք ճառերու, օրհնութիւններու եւ գովեստներու տեղ: Բայց ինչո՞ւ այսպէս սրտի անկեղծ ցաւ մը, օգտակար փորձառութիւն մը, կուսական քրտինքով ձեռք բերուած արգիւնք մը զրելէ աւելի ինչ համեստութիւն, ինչ քաղցրութիւն կանոցի թարմ ու առոյգ սրտերու:

Ճիշդն աս է թէ վարժարանը, այսպիսի ուսանողներ պատրաստելու համար, անբաւական գտնուած է. տրուած բարոյական մղումը՝ մօտաւորական նպատին չափով՝ հաւասարադօր է ուրիշներուն: Եւ ինչպէս որ մեր ուրիշ դպրոցական աղջիկներ վարժուհի կ'ըլլան օր մը, վարժուհի են աս ձեւով Դպրոցասիրացին աղջիկներն ալ: Անբաւական է աս՝ նոյն իսկ գաւառներէն եկած գովեստներն ալ մէկ տեղ առնելով, և այսպէս պիտի շարունակուի ցորչափ դպրոցն իր ծրագիրը չի բարեփոխէ:

— Ծրագիր մը փոխելը դրամական պահանջներ կ'ստեղծէ: — Ճիշտ է աս, և սակայն դրամանը քովը կեցած է, ինչպէս, կարծեմ, դիտուած է ուրիշ անգամ: Սա է թէ քանի որ վարժարանը թաղային դպրոցներուն տուած կրթութեանն տարբեր բան մը չունի ծրագրին մէջ, և ոչ ալ իր առանձինն ուսուցիչներն՝ կրթութեան

գործն առանձին եղանակաւ մը վարելու, մանր մունր աղջիկները թո՛ղ զրկէ իրենց թաղին գպրոցը, և աւարտականներ ընդունի խիստ քննութեամբ: Աս դրութիւնը նախ հինգ լեց դասարան ունենալու և անոնց նախակրթութեան համար դրամ ծախսելու հարկէն կ'ազատէ գպրոցը, և, անկէ զատ ալ, իր հրաւերին համեմատ, պիտի դան աղջիկներ, որոնք իրենց հասակին հետ քիչ շատ ալ զարգացած, կըրնան գգալ իրենց մէջ վարժուհի ըլլալու կոչումը, մինչդեռ հիմա, վանական կըրթութեան կամ դրութեան պէս, ունեցան միշտ առանց կոչումի կոչութեան, որոնք իրենց ընծայութեան օրը ո՛չ սերկեանը գիտցան և ոչ ալ վաղուանը գուշակեցին: Այնուհետեւ, բնականապէս մըլումը դադարած օր մը, որ պիտի հասնի, ո՛րչափ ալ իր յանձն առած լուծին տակ պարանոցը կըքէ վարժուհին, ներքին աշխատող մըն է, թուլցած, լքուած, հոգմածփիկ, և միւս կողմանէ յաւիտենական դժգոհ մը:

Ծրագրի համար նշանակուած փոփոխութիւնները, ինքնին ջնջելով հիմակուան ծախսերը, թոյլ կուտան որ գպրոցը բանայ իսկապէս վարժուհիներու շրջաններ: Տիկին Մատակեան մեծապէս կարող է օգնել անոնց աս ձեռնարկութեան մէջ, և զարմանալի է որ Տիկինանց գպրոցը, իր գործին ամենէն օգտակար ձեռքը չտեսաւ:

Ասոնց հետ, —ինչ որ առջի օրէն բնաւ չէր կրնար զանց ընել Դպրոցասիրացը, — վարժուհիները պէտք է ծանօթացնել մեր գաւառաբարբառներուն. ապա թէ ոչ իրենց յանձն առած առաքելութիւնը՝ մեր պատմութեան մէջ դժուած յոյն և ասորի վարդապետներուն քրիստոնէական առաքելութիւնը կ'ըլլայ: Ոսկերեքանի ոսկեղէն լիզուէն ու ֆրանսերէն բառերէն աւելի կարեւոր են ասոնք:

Եւ որպէս զի գաւառական կեանքն ընդգրկեն իրենց փափուկ դաստակներով, պէտք է իրրեւ իտէական ունենան՝ օգտուելու ըլլալէն «Եւրոպայ», և աս հաւատքը անշափ պէտք է զօրեղ ըլլայ, որ անոր մէջ գտնեն կամ դնեն ամէն հաճոյք, ամէն հրճուանք: Պէտք է գիտնան որ գաւառ-

ներու մէջ շրջագգեստին ծախքերը, կուրծքի վրայ թռած ժապաւէնները բնաւ արժէք մը չունին: Գաւառացի աղջիկը մեղկելու չէ կարգ մը արձակ ու չափական գրուածներով, որոնք կարծես թոյնի մը պէս կը սրսկուին ուղեղներու մէջ: Սիրցնելու է անոր հի՛ն հի՛ն ծառերը, որոնք, կտրտած ու թափթփած տեղ տեղ, ահագին բունին վրայ կը ցցուին դէպի վեր, և վերն ալ կանաչ ճիւղ մը կ'երերցնեն սաղարթուն, սիրցնելու է անոնց սարերը, լեռները, որոնք՝ տաւոյ ամէն եղանակին՝ ձիւնապսակ գլուխներով կը ծրարուին ամպերու մէջ և իրենց ստիկքը քամելու պէս՝ սառ գետերը կը հոսեցնեն արտերը թրջելու: Աշխատութեան կորով ներշնչելու է անոր, որ լաջակին տակէն գիտակները նետէ հովին առջեւ, քրտնի կիզող արեւուն տակ, կոխկոտէ ձմրան ձիւնը, արհամարհէ սառէ ապառաժները, և իր գոյնն ալ բաղէ դաշտի ծաղիկներէն ու ծիածանի երանգներէն:

Ասոնց ամենէն ետքը կուգայ տիրական դաս մը, շատ տխրական: Գաւառացի աղջիկը օր մը, իր մօրկան պէս, պիտի ճամբու դնէ սիրականները դէպի անծանօթ ավուներ, և ան ատենը միւսակ պիտի մնայ տանը մէջ: Գուցէ օր մըն ալ յաւիտենական սուգը ներս մտնէ ու ծանր ծանր նստի սրտերու վրայ: Աշխարհ, ատ կսկծանքի ու սեւ ժամերուն, կուգայ կ'երեւի թունաւոր ժպիտներով: Թող սովրեցնեն նաև որ գաւառացի աղջիկը վարժի դո՛ւ ըլլալ քիչով, և՛ եթէ կարելի է՝ իր տնակին մէջ միւսնոյն հացը կիսէ սիրականներու հետ միւսնոյն սեղանին վրայ, ու չբաժնուին:

Ասոնք ընելու համար բարոյական մեծ տոկունութեան պէտք կայ, ինչ որ չունին Դպրոցասիրացի վարժուհիները, չունեցան ու չպիտի կրնան ունենալ, բայց եթէ հիմնական փոփոխութեամբ մը:

ՀՐԱՆԴ

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Բանկալթի մեծ պողոտային ծայրը , գէպ ի ռուսական հիւանդանոց տանող խաղաղիկ փողոցին մէջ , ամեն անգամ որ կը մտնեմ վանդակապատ գուռնէն որ մաքուր ծառուղիի մը կը յանգի ու վիէննացւոյ վանատան հին շէնքին , մանրանդկար մը կը գծեմ մաքիս մէջ այն զրական հոյակապ գործունէութեան զոր կը կատարեն վիէննայի Միթթարեանք՝ աւստրեան բաղմամբսոր ոստանին մէջ : Հոս ալ , իրենց մէկ մասը , բաղմամբս արուարձանի մը շատ մօտ , կը շարունակէ նոյն անշուշտ աշխատութիւնը որ հիացում կ'ազդէ մօտէն դիտողին :

Վանատան հին մէկ սրահին մէջ , պատկերներով ու մատենադարաններով լեցուն , խոշոր սեղանի մը առջեւ կ'բաժնաւորուի ծեր և մարմնով ու մտքով աշխոյժ վարդապետ մը , մեծ բաժին մը կը կեդրոնացնէ իր վրայ իր եղբայրակիցներու այդ գործունէութեան . առաւօտը իր պատարագին կը հասնի , ցորեկը այցելութիւններուն , գիշերը վանական ծառայութիւններուն , և չես գիտեր ե՛րբ կը գտնէ ժամանակ այնքան մանրակրկիտ ու յոգնեցուցիչ աշխատութիւններ կատարելու որոյ մէկ մասը տեսանք Հայ Լրագրութեան վրայ երեւցած նոր գործին մէջ : Հ. Գրիգորիս Վ. Գալէմբեարեան , այդ բաղմամբս ցորեկի երիտասարդ հեղինակը , սա տողերով կը յայտնէ իր երէց աշխատակցին մասնակցութիւնը .

Եթէ այս եւ յաջորդ շրջաններու մէջ յիշուած լրագիրներու ամբողջական տարիներ անձամբ տեսնելու բախտ ունեցայ , զայն կը պարտիմ կրօնակից Վ. Հ. Եղիշէ Գալէմբեարեան Վ.ին , որուն երկարատեւ ջանքին Միաբանութեան մատենադարանին հայ լրագրաց ժողովածոյն այս օրս՝ որչափ գիտեմ՝ մի միակ հարուստ եւ զրեթէ ամբողջացած է :

Վանականները , ժամանակակից կարգ մը գրողներէ «բիշ մը» աւելի համեստ , իրերբագովութեան ախտին միջբոլոր ազդուապէս գիտցած են ջնջել , նոյն իսկ

երբ ճշմարիտ արժանիք մը կայ երեւան հանելու . «պատուական եղբայրակից» ի դրութիւնը , «հանճարեղ» ի տիտղոսը , խմբագրականի մը ու նամակի մը գիրկընդխառնումին մէջ փոխադարձ փառաւորում փնտռելու տկարութիւնը անոնց համար չէ . ապա թէ ոչ , ի՞նչ արժանաւոր բաներ պիտի կրնային գրել իրարու Հ. Գալէմբեարեան և Հ. Գալէմբեարեան , այս կարեւոր գործին հրատարակման առթիւ : Վստահ եմ , նոյն իսկ , որ այդ երկու կրօնականները պիտի նեղանան Մալէի գէմ , որ իրենց անձին վրայ խօսելու աշխարհիկ գաղափարը կ'ունենայ :

Օրաթերթերը գրեցին արդէն այս գրքին վրայ , և եթէ քիչ մըն ալ մենք քրքրենք պարունակութիւնը , մեծ բան մը չպիտի մնայ այն ընթերցողներուն որք այս հատորէն ունենալու հազուադիւտ բաղձանքը տածեն . հազուադիւտ ըսի , չի գտնելով աւելի չեշտող բառ մը . ամբողջ մօտեցաւ այս գրքին հասնելուն , և կլընանք վստահիլ թէ գոնէ երեսուն օրինակ մը սպառած ըլլայ արդէն :

Իայց Հ. Գալէմբեարեան նիւթական ակնկալութիւններէ շատ վեր՝ բարոյական նպատակակէտով մը կատարած է այս գեղեցիկ երկասիրութիւնը . իր ձօնը պէտք եղածին չափ պերճախօս է արդէն .

Ա Ռ Թ Ի Ի

ՀԱՐԻԿՐԱՄԵԱՅ ՅՈՐԵՆԻՅԻ

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ

յամին 1894 հոկտեմբեր 16/28

Ն Ո Ւ Ր Է

ՀԱՅ ԽՄԲԱԳՐՆԵՐՈՒՄ

ՀԱՂԻՆԱԿԸ

Հայ մամուլ մեծ ու պղտիկ բոլոր աշխատաւորներուն կողմէ իրեն ուղղուած շնորհաւորութիւններն ու շնորհակալութիւնները , հրապարակային թէ մասնաւոր , իր մեծագոյն վարձը կը նկատէ անշուշտ Վեր. հեղինակը , և ամենէն անկեղծներուն քով կրնայ դասել Մալէի խնդակցութիւնները :

* * *

Վաթսունը հինգ տարեկան վարդա-

պետ մըն է հայր Գաֆթանեան և քսանը հինգ տարիէ ի վեր ձեռնարկած է բոլոր հայ լրագրաց ցուցակն ու դասակարգութիւնը պատրաստելու: Քսանը հինգ տարին, նոյն իսկ գրով գրուած, որքա՛ն կարճ ու կոկիկ է թուղթի վրայ. բայց մտածել անգամ մը իրական քառորդ դարու մը երկարութեան, որոյ միջոցին կը պրպտես, կը վաղես, կը թղթակցիս, կը զնես, քանի մը հարիւր երեսով հատորիկի մը միմիայն նիւթը պատրաստելու համար. և այդ միջոցին կրուած պատրանքները, զգացուած ուրախութիւնները, հոգեկան ու մարմնական ի՛նչ յոգնութիւն կը պատճառեն: Աղբաւը, Հայոց անդրանիկ լրագիրը, հրատարակուած ի Մատրան, տեւած է 1794էն 1796: Այդ երկամեայ հաւաքածուն գտնել՝ ձեռունի վարդապետին խոտալը կը դառնայ երկար ատեն և օրին մէկը անհուն ուրախութեամբ կ'իմանայ թէ հնասէր ու գրասէր Աւագերէցի մը քով կը գտնուի այն. չունչը անոր տունը կ'առնէ:

—Տէր Հայր, Աղբաւը՛ն հաւաքածոյքը կը վաճառէ՞ք:

—Յիսուն ոսկի է, վարդապետ:

Խեղճ Հ. Գաֆթանեանը գրպանները կը խառնէ, մտովի հաշիւներ կ'ընէ. անկարելի բան. եթէ առաջին լրագրին համար յիսուն ոսկի տայ, քանի՛ հազարի պիտի հասնի բոլոր լրագրաց հաւաքածուն: Յուսարեկ կը բաժնուի Աւագերէցէն, որ, —չի մոռնանք ըսելու,— բարեկամ մըն էր իրեն և անշուշտ իր ունեցած թանկագին հնութիւնը ձեռքէ չհանելու նպատակով նիւթական զգուարութիւն հանած էր: Վարդապետը չի յուսահատիր, հետամուտ ու հետաքրքիր կ'ըլլայ և վերջապէս կը յաջողի Աղբաւը՛ն ամբողջ հաւաքածուն գտնել աշխարհականի մը քով՝ որ, կ'երեւի թէ նուազ հրնասէր ըլլալով, կը յանձնէ... տասն եւ եօթը ոսկի: Յաջորդ օրը, թանկագին բեռը թղթատարին կը յանձնուի Վիէննայի վանքը զրկուելու համար: Դիւրին է երեւակայել անդին՝ Հ. Գալէմբեարեանին ալ ուրախութիւնը: Եւ ահա նոր «զգաղ-գութիւն» մը. հաւաքածոյին մէկ քանի

էջերը պատառուածքներ ունին եղեր. Հ. Գաֆթանեան՝ այս «գոյժ»ը ծանուցանող նամակն ստանալուն պէս, նորէն կը դիմէ իր, —և մեր— Աւագերէցիին:

—Տէր Հայր, կը ներէ՞ք դոնէ որքանի մը մասեր ընդօրինակեմ:

—Որչա՛փ որ կ'ուզէք, վարդապետ, ձեր սրամազրութեանը ներքեւ է:

Այս մանրագէտը թերեւ տարտամ գաղափար մը տայ հայերէն լրագրաց հաւաքածոյին պատրաստութեան համար յաջորդաբար տարուած աշխատութեանց ու կրուած յոգնութեանցը վրայ:

* * *

Հ. Գալէմբեարեանի երկասիրութիւնը կը խօսի 1794էն 1865 երեւցող հայերէն 50 լրագրաց վրայ: Անգաղտնապահութիւն մը ընելու հաճոյքով, կրնամ ըսել թէ այդ թուականէն մինչեւ հիմայ հրատարակուածներուն թիւն է 122, որոց վրայ պիտի խօսուի երկրորդ հատորին մէջ: Հ. Գաֆթանեան ունի ամբողջ ցուցակն մէկ դարու մէջ հրատարակուող այդ 172 հայերէն լրագիրներուն, չահեկան ծանօթութիւններով զորս այնքան լաւ գիտէ բերնուց որքան ուշիմ գպրոցական մը իր Քրիստոնէականը: Հետաքրքիր եղայ իմանալու իրմէ թէ այդ 172 լրագիրներուն քանիի՞ն հաւաքածուն յաջողած է ձեռք բերել. —60 հատինը ամբողջ և 40 հատինը կիսովին, մնացածներէն ալ նմոյշներ միայն: Այն հոգածու ընթերցողները որոնք մօտ ատեններու ո՛ր և է թերթի մը գէթ միամեայ հաւաքածուն ունենալ փափագած են՝ պիտի կրնան զիւրաւ ըմբռնել թէ ի՛նչ ըսել է քառորդ, կէս դար կամ աւելի ժամանակ առաջ երեւցող թերթերու հաւաքածոյին պատրաստութեան ձեռնարկելը: Պարզապէս հսկայ աշխատութիւն մը:

Մա՛նի ընթերցողներուն տալիք նուրութիւնս այս չէ սակայն:

Մերունի Միթիարեանը, իր Միաբանութեան հետ համախորհուրդ, ձեռնարկած է պատրաստելու հայերէն տպագրուած բոլոր գրքերու հաւաքածուն: Կատարեալ հնախոյզի գործ, որ կը պահան-

Չէ հմտութեան չափ հետապնդող ոգի և մտաւորականէն աւելի նիւթական զոհողութիւն . այս գնահատելի աշխատութիւնն ալ բաւական առաջ տարուած է արդէն . մէկ կողմէն՝ Հ. Գաֆթանեան կը պրպտէ Պոլսոյ չորս անկիւնները , հին գրատունները , ծեր պատուելիներու և անկեալ գրագէտներու մատենադարանները և միւս կողմէ կը զրկէ Վիեննայի վանքը . եթէ ձեռք բերած հատորը , հին կամ նոր , կրկին օրինակ է , հաս մը իր քով կը պահէ . Միաբանութիւնն ալ նոյն աշխատութիւնը կը կատարէ իր կեդրոնէն , թղթակցելով ամեն երկիրներու հայերուն հետ որք մատենադարան մը ունին . դեռ կարելի չեղաւ որոշակի իմանալ թէ քանի՜ հազարի կը հասնի մինչև ցարկ կատարուած հաւաքածուն : Բայց Հ. Գաֆթանեան՝ խոշոր տետրակի մը մէջ մանրիկ գրերով նշանակած է իր բոլոր առաքումները որք պատկառելի թիւի մը կը հասնին . կը գուրգուրայ այդ ցուցակին վրայ , իբր հոգեհատոր առարկայ մը , և այդ սովորաբար անխօսուկ վարդապետը՝ ատենաբան մը կը դառնայ , երբ կը հարցափորձես զինքը՝ իր գիրքերուն վրայ : Շատ իրիկուն , մութին , վանատուն կը դառնայ թեթեւոտն ու զբաղած զէմքով , վերարկուին տակ պահած ծրար մը . իր եղբայրակիցները կը հասկընան խկոյն թէ դարձեալ հին գրքեր գտած է : Վերջին անգամ որ այցելեցի իրեն , սեղանին վրայ զրած էր երեք հատորներ , զորս ուրախութեամբ կը ցուցունէր ինծի , խել մը ծանօթութիւններ ալ տարով :

— Կը տեսնէ՞ք սա Փոքր Ճաշոյր 1793ին տպուած է Պոլիս , « ի մայր դպրատան » :

— Ո՞ր տպարանը ըսել կ'ուզէք :

— Մատթէոս Դպրի տպարանը . ասիկայ երրորդ տպագրութիւնն է . առաջին երկուքը դեռ չի գտայ : Այս միւսը շատ աւելի հազարադիւտ գործ մըն է . Բժշկաբան Քալանթարեանի , 1793ին տպագրուած ի նախիջեան : Այս ալ , Պաղտատար Դրպրի քերականութիւնը , Պոլիս տպուած . բայց թուականի սխալ մը ունենալու է ասոր տպագրութեան յիշատակութիւնը :

Ու խօսքն ընդհատելով կը սկսի թըղ-

թատել հարիւր երեսուն երեք տարուան այդ հատորը , տոմարական հաշիւներ ընելով որոյ խելքս չի հասնիր :

Հայերէն գիրքերու հաւաքածոյին անդրանիկ հատորն է 1512ին տպուած Պարչաբոմար Հայոցը : Ի սկզբան , երբ Վիեննական Հայրերը ձեռնարկեցին այս աշխատութեան , իրենց դտած հնագոյն հատորն էր Սադոս Դաւիթ (1565) . ետքէն ձեռքերնին անցաւ Պարչաբոմարը և այդ կէս դարու միջոցին (1512-65) տպուած երկու երեք հատորներ ալ :

— Հետաքրքրական վիճակագիր մը կալելի է պատրաստել , կ'ըսեմ Հ. Գաֆթանեանին , երբ ամբողջացած նկատէք գրքերու հաւաքածուն . անոնց ցուցակներէն կարելի պիտի ըլլայ որոշ գաղափար մը կազմել թէ հայերէն գրքերու տպագրութիւնն ի՞նչ համեմատութեամբ , ո՞ր թուականներուն և ո՞ր քաղաքներուն մէջ աճած կամ նուազած է :

Վերապատուելի խօսակիցս , որ իր սիրական նիւթին վրայ յոգնիլ չգիտեր , կը բանայ իր տետրակները և խիստ պզտիկ փորձ մը ընել կ'ուզէ յայտնած գաղափարիս :

Ու կը սկսի համբել :

Մանկամարդ աղջիկ մը այնքան գորովանօք չպիտի փնթթեր ծագիւն թերթերը՝ իր սիրոյ գաղտնիքն իմանալու համար , կամ խաշնարած մը նոյնքան համբերութիւն չպիտի ունենար իր դառնուկներն համբելու , որքան զրատէր Մխիթարեանը կ'ունենար համբերութիւն ու գորովանք՝ այս փորձը կատարած պահուն : Իր գէմը նստած , զմայլանքով խառն համակերպութեամբ կը հետեւիմ իր աչաց թարթափումներուն , ոսկի ակնոցներուն տակէն , ու չրթանցը շարժումներուն , իբր թէ աղօթք մը մըրմընջէր . աջ ձեռքը զրիչ մը բռնած ու ձախովը տետրակին էջերը դարձունելով կը համրէ ու կը նշանակէ անխօսուկ :

Քիչ մը եւս , և պիտի զգայի այս գաղափարը սուած ըլլալուն :

Վերջապէս կիսաւարտ ցուցակին դումարները կը յայտնէ , քուէարկութեան մը արդիւնքը ծանուցանող ատենապետի մը պէս :

—1565-ին 1665, կը գտնենք ընդամենը 35 տպագրուած հատոր. ենթադրելով որ 4-5 հատ մը եւս գտնուին, զորս գեռ ձեռք չենք անցուցած, ըսել է այդ հարիւր տարուան մէջ . . . քառասուն հատոր: 1666-էն 1766, տպագրուած ունինք հինգ հարիւր հատորէ աւելի. այս թուոյն մէջ են նաեւ կրկին տպագրուածներն ալ: Իսկ 1766-էն 1866, հազար հատի մօտ: Հիմայ, սիրելիս, պզտիկ աշխատութիւնով մը կրնամ ճշգրէ մինչեւ մեր օրերը եղած տպագրութիւնները:

—Կ'աղաչեմ, վարդապետ, արդէն շատ յոգնեցուցի ձեզի, այդ աշխատութիւնը կրնանք կատարել ուրիշ ատեն մը:

—Բայց ինչո՞ւ հիմայ չընենք:

Հնաւէր վարդապետին համար ո՛չ դիւրուան վրայ հասնիլը ո՛չ ընթերթի ժամը կարեւորութիւն չունէին: Դժբաղդաբար, աշխարհականի մը ու նորասերի մը հետ էր գործը, և յօժարեցաւ հոտ կենալ:

* * *

Հ. Գալէմբարեանին վրայ ալ առանձինն խօսելու պէտք կար անշուշտ. կը ցաւիմ որ հեռաւորութիւնը չէ ներած մօտէն ճանչնալ զինքը ու լրացնել այս պէտքը: Երիտասարդ վարդապետը, 1875ին, պատանի հասակին մէջ, Վիեննայի վանքը առաջնորդուած, տասնութ տարիներէ ի վեր թաղուած կը մնայ իր գրական ուսումնասիրութիւններուն և աշխատութիւններուն մէջ: Իր անունը, սակայն, որ կերելի գրքին ճակատը, տեսակցութեան մը նկարագրութենէ և համեկրական յօդուածէ մը աւելի մնայուն ու կենդանի յիշատակ մըն է. հայ մամուլը ջերմագին սիրով ողջունած է արդէն և կը պահէ իր սրտին մէջ այդ անունը:

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Ռ Ե Յ Ա Ն

[ՆՈՐԱՎԷՊ]

Ա.

Ան ատենն ալ առատ մազերը կը սիրէի ու քովընտի նստած՝ կը դիտէի ձիւնըսպիտակ ծոծրակին վրայ ժողվուած սեւ թումբը, պարտէզին մէջ տեղ տեղ դըրուած կազի լապտերներու լոյսերուն տակ, չքեղ ու անբարբառ ցոլացումով որուն աչքերս յառած կը մնային:

Ինչե՛ր չէին ըսեր ինծի այդ մազերը. իրենց անմուռնչ կեցուածքը՝ հո՛գ, այդ բարձունքին վրայ, պարկեշտ ու վրդովիչ բան մը ունէր:

Հեռուէն՝ նայուածքս կը հետեւէր անոնց շնորհալի շրջագիծին, կամակ ելեւէջներուն, ըմբոստ պզտիկ թեւերուն, —ըմբոստ՝ որպէս են ամեն պզտիկները—, սրունք սանտրէն փախչելով կը դառնային կ'իշնային վար, զոպանակի գալարումներով:

Քիչ քիչ, մտերմութիւն կը հաստատէի անոնց հետ. կը ճանչնայի զանոնք, գըրեթէ կը խօսէի հետերնին:

Ամենէն հաճոյալի անակնկալը եղաւ երբ ինծի դարձաւ իր դէմքը. գեղեցիկ. ոչ հարկաւ. բայց տարօրինակ կերպով սրտի մօտ ու համակրելի պատկեր մը, յոգնած ու տրտում նայուածքով որ ինկած տեղը կանգ առնելու պէս բան մը ունէր կարծես:

Անո՞ր համար երկար ատեն սեւեռած մնաց վրաս. չեմ գիտեր. բայց ինծի այնպէս թուեցաւ որ այդ նայուածքը մանրամասն հետախուզեց զիս. չափեց, ձեւեց, տեսաւ մանաւանդ զմայլած ու քիչ մը ապշած արտայայտութիւնը աչքերուս: Գոհ երեւցաւ անշուշտ այս քննութենէն, վասն զի ժպտի մը գծագրուիլը ու աներեւութանալը մէկ եղաւ երեսին սաստիկ կարմրութեանը մէջ, այն վերջալոյսի տարտամ շառաւիղներուն նման որ արեւմուտքին մէջ կը հալին՝ համառփուռ չէկութիւն մը ձգելով հորիզոնին վրայ:

Բ

Որչափ որ կեցանք այն տեղ՝ անխօս մտերմութեան մը կապերով միացած զգացինք սրտերնիս : Տարեց մարդիկ կային իր շուրջը , հայրը , հօրեղբայրները թերեւս ու անոնց առջեւ , մանաւանդ այն չարահայեաց բազմութեան մէջ որ այս Մէօհիւրտարի պարտէզը կը լեցնէր հիմայ , զգուշաւոր դիրքը պահելու ըստիպուած՝ չէր կրնար ուղածին չափ ստեպ ինծի դառնալու . բայց զինքը տոչորոյ յայտնի անհամբերութիւնը՝ կը կարգայի երեսին վրայ , ամեն անգամ որ առիթը գտնար իմ կողմն նայելու :

Պատանութեան անուրջներուն մէջ երազուած , ըզձացուած էակն էր դէմն , symbole՝ իմ բոլոր փափագներուս որ հոգ նստած էր , իր անվերլուծելի ձգտութեանը մէջ :

Այլատ էր ան երեսս չնայելու ու չի խնդալու ինծի . ի՞նչ փոյթ . նորէն պիտի սիրէի զինքը , պիտի հետեւէի իրեն ու կապուէի իր յիշատակին . իր կուռքի անտարբերութիւնը՝ մազի չափ չպիտի խախտէր իմ հաւատքս :

Իսկ հիմայ աւելի բախտաւոր էի . կ'ըզգայի ստոյգ կերպով որ անուշագիր չէր ինծի , ու զիս վրդովող խորհրդածութիւնները՝ իր մտքէն ալ կ'անցնէին :

Երազող ու մտամոլոր կերպարանք մը առած էր անիկայ և անդադար կը զիտէր ծովը հանդարտ , անծալք ավազանի մը պէս պարզուած որուն վրայ լուսինը՝ իր լրունի առատութեանը մէջ , ագամանգէ ոստոստուն գոհարներ կը թափէր , մինչդեռ ամառ գիշերին անդորրութեանը մէջ՝ ծառերը կը կենային մեր շուրջը անշարժ՝ մինչեւ իրենց դողացող սալարթիները : Օդին մէջ՝ ամբողջ անուրջի , վերացումի հրաւէր մը կար կարծես որուն երկուքս ալ անձնատուր կ'ըլլայինք ժամերով :

Գ

Կէս գիշերին մօտ էր երբոր բազմութիւնը ցրուել սկսաւ . լուսինը անհետացեր էր . անոնք ալ ոտքի ելան . գլխու անընդմարելի շարժում մը՝ որ երկուքիս միայն

հասկնալի ըլլալուն համար այնքան աւելի քաղցր բարեւ մը ձեւացուց :

Հեռուէն ուղեկից եղայ իրենց ու ճամբուն վրայ , մութին մէջ տեսայ իր նաղելի գլուխը՝ որ ետին կը դառնար մէկը փրնտըռելու համար կարծես :

Յամբ ու զանգաղ քալուածքով մը կ'երթային ու հօրը ձայնը կ'իմանայի զմեզ չըջապատող անդորր լուսեանը՝ մէջ , խիստ ու հրամայող ձայն մը որ հնազանդութիւն կը պատուիրէր :

Արդէն կը մեղքնայի զինքը . ի՞նչ կը քաշէր արդեօք խստասիրտ հօր մը ճնշումին տակ . մեծ ծառի մը անքոյթ հովանւոյն ներքեւ փթթած ծաղիկ՝ որ քամիի հարուածներուն դէմ պաշտպանուած է անշուշտ , բայց ուղածին չափ արեւին երեսը չտեսներ . անդին , ուրիշներ կան , բայց օդին , ձիւնին ու փութին ձգուածներ որոնց՝ վտանգները ու վայելքները հաւասարապէս շռայլուած են . ո՞րն է բազմաւորը ասոնցմէ :

Կ'զգամ որ իմն վանդակներու ետին պահոււրտող աղջիկ մըն է . իր վեհերոտ ձեւը այս համոզումը կուտայ ինծի : Ո՞վ է ինքը , ո՞ւր կը բնակի . այս հարցումները այնքան աւելի կը յուզեն միտքս որքան ահա քիչ քիչ կը մօտենան հարկաւ իրենց տունին :

Կանգ առին վերջապէս Ֆրէնչներու դպրոցին կողմը , նոր շինուած տան մը առջեւ . պղտիկ սպասուհի մը՝ կանթեղ մը բռնած ձեռքը , դուռը բացաւ . ես քայլ մը եւս առի մօտենալու ու վերջին անգամ մը տեսնելու համար զինքը . հայրը մտաւ նախ , վերջը միւսները , տարիքի կարգաւ . էն վերջը մտաւ անիկայ ու ես մինակ մընացի տասը քայլ հեռուն փողոցին մթնութեանը մէջ :

Ան ատեն ուղածիս պէս զիտեցի տունը . դէպի Գուշ-տիլի իջնող զառիվայրին ու հոն վաղող վտակին կը նայէր երեսը . գեղջուկ ու սիրուն բան մը ունէր . աջ կողմը՝ անկիւնի սենեակը , էն աղւորը զիրքով լոյս մը երեւցաւ յանկարծ ու փողոցէն կ'ըցայ տեսնալ անիկայ , մաղերը թափած հիմայ , որ բաց պատահանին առջեւ եկաւ կանգ առնելու վայրկեան մը :

ու գիտելու համար Մօտայի ծոցը իր սեղ-
մուած հոգէ լանջքերուն մէջ:

Յետոյ լոյսը մարեցաւ ու ամեն բան
խաւարի մէջ ինկաւ յանկարծ:

Գ.

Ի՞նչ կը խորհիս դուն, ձեռքդ գլխուդ
այգպէս, պատուհանիդ առջեւ նստած.
Թեթեւ քամին, մեղմիւ կը շոյէ մազերդ
ու ես կը նշմարեմ հոսկէ անոնց վրայ
վաղող սարսուռը:

Այս իրիկուան գէմը ելլող աղօժն կը
մտածես դուն ալ. սպասուած, օր մը չէ
նէ օր մը գտնուած անծանօթին՝ որ հին
բարեկամի մը պէս առջի ժամէն մտերիմ
կ'երեւայ քեզի, ինչպէս որ ես ահա, փո-
ղոցին մէջ պատի մը տակ կեցած, քեզի կը
մտածեմ:

Յետոյ, ձանձրացած այս միակերպ ան-
շարժութենէն փողոցին մէջ, կը քալեմ,
աչքս վեր այդ պատուհանին սեւեռած.
Ի՞նչ կ'ակնկալեմ քենէ, բաւ մը, անուշ
խօսք մը որ չ'ապօքիւր ապացոյցը բւեւայ
զմեզ միացնող համակրութեան:

Մութին մէջ՝ չեմ կրնար որոշել գէմքը
զոր՝ ծնօտին դրուած ձեռքը կը գոցէ, բայց
սեւ մազերուն ժողովուածքը կը տեսնեմ
յստակ. մունջ կեցած է հոն, չի համար-
ձակելով առջի բառը ինքը արտասանել:

Եւ ես, իրմէ ոչ նուազ վեհերոտ, չեմ
խօսիր, վախճալով որ չի խռովեմ այս գե-
ղեցիկ երազը ու ձեռքէ չի հանեմ զայն:

Հիմա, զովութիւնը կ'աւելնայ, աջ ու
ձախ երկարող փողոցներուն մէջ կը լսեմ
գիշերապահին ճոկանը որ կը հնչէ ու կ'ի-
մացնէ որ ժամը եօթն է:

Վերը անշարժ կ'սպասէ ան իր արձա-
նի դիրքին մէջ ու ես վարէն, զինքը զի-
տելով միայն երջանիկ եմ ահա: Հորիզո-
նին վրայ պլպլացող լոյսերը կը աժգու-
նին քիչ քիչ. զիշերը աւելի յստակ, վճիտ
ու թափանցիկ կ'ըլլայ ու հեռուն ծովին
մութ կապոյտը, իր առջի փայլը կ'որսն-
ցուցած՝ սեւ ծածկոցի մը պէս կը տարած-
ուի իբրեւ թէ անհուն դադաղի մը վրայ:

Շուրջս տիրող վեհութեան ու խա-
ղալութեան մէջ ինքզինքս ուրիշ աշխարհ
մը փոխադրուած կ'զգամ. մաքուր ու խա-

ղաղ երկիր մը որ ինձմէ և իրմէ դատ բը-
նակիչ չունի. ամբողջ տիեզերքը մեր եր-
կուքիս ձգուած:

Աքաղաղները կը խօսին. արեւելքէն
լոյսի հոսում մը կ'սկսի. գեղեցիկ մազերը
վերն են միշտ պատուհանին առջեւ իրենց
առջի դիրքին մէջ, հովը կը գգուէ զանոնք,
անոնց պլտիկ թերերը կը դողացնէ. դէ-
մէն՝ լոյսը կ'աւելնայ, կը ղեղու, կը շաշ-
լուի. արշալոյսն է:

Վաստակաբեկ, ժամերով հոս անքուն
անցունելու համար չեմ գանգատիր. դէմս
է անիկա, իր պատուհանին առջեւ ինձի
պէս անքուն, ինձի պէս երազող:

Ի՞նչ մըն ալ կը կենամ այսպէս. յան-
կարծ սեւ մազերու կոհակը կը ճշդուի
աչքիս առջեւ. ուհանի պլտիկ թումբ մը,
իւր մութ կարմիր թաղարին վրայ կեցած,
առաօտեան զննիւռէն կը սարսուռայ:

Ա՞ն էր բայց պատուհանին առջեւ սպա-
սողը ինձի մինչեւ լուս. կը զարմանամ.
Ի՞նչպէս չի տեսայ. ծաղրելի կը գտնեմ
ինքզինքս. կը բարկանամ պլտիկ իյնա-
լուս համար:

Ե.

Հիմա, որ տարիներ անցան անկէ ի
վեր, հիմա կ'օրհնեմ քեզի, ո՛վ ուհանի
պլտիկ փունջ, որ ամեն սրտի մօտ բա-
րեկամէ աւելի երջանիկ ըրիր զիս զիշեր
մը ողջոյն:

Աղջկան մը գէմք առիր պատրելու հա-
մար զիս. աղէկ ըրիր. այն բոլոր խան-
դակաթ գորովին համար՝ զոր թափեցի
պլտիկ թերթերուդ վրայ, չեմ զոջար:

Առաւօտը թող գայ ուղածին չափ իր
հոսած լոյսին անողոր ստուգութիւնը թօ-
թափելու համար չորս գիտ:

Դուն իմ աչքիս՝ առատ գեղեցիկ մա-
զերն ես միշտ անոր:

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

Ս Ի Կ Ա Ր Ը

ՓԱՐԻԶԵԱՆ ՇԻՇՈՏԱԿԱՆՈՐ

Աւանդութեամբ գիտենք թէ դարեր առաջ, երբ չորին չէր դործեր ոչ հողին և ոչ ջուրին վրայ, այն ատենուան Ձինուկայսրը զարմանօք հասկցաւ մարդահամարի տուժարէն՝ թէ իր մայրաքաղաքը կը բնակի հայ մը, կալ վանցի մը, խաչօ առնունով, խաչագող մը թերեւս:

Առասպել է այս պիտի ըսէք. չէ՛. մի՛ ըսէք այդպէս. այդ կալ վանցին՝ առասպել մը չէ. եթէ կ'ուզէք ճշմարիտը լսել, ես եմ, դուք էք, ամէնքնիս ենք առասպելը. քանզի երբ Պոլսոյ հայերը՝ կիները մանաւանդ՝ իրենց սեթեւեթեալ հագուստ ու կապուստով, վաք ու սարք, նիստ ու կացով, և իրենց անունով գլխաւորաբար, կը նկրտին ֆրանսացի, յոյն, իտալացի ևւն. ազգերուն նմանութիւնը բերել իրենց վրայ, — ու երբ, միւս կողմանէ հազուադէպ բան մը չէ տեսնել մեր գաւառացի եղբայրներուն մէջ այնպիսիներ որոնք օտար անուններ ունին, — ըսէք, կ'աղաչեմ, մե՞նք ենք առասպելը թէ կալ վանցին, որ խաչիկ անունը իր ազգութեան հետ մէկտեղ մինչև Ձինաստան տարած, տուժարներու մէջ արձանագրել տուած է տեղն ի տեղօք:

Հետեւապէս, խնդրեմ գութ ունեցէք մեր խաչոյին վրայ, որ, եթէ ցուպ ի ձեռին, կաղն ի կաղ, տարիներով կըցած է քալել ու հասնիլ հաստատուիլ երկնային կայսրութեան մայրաքաղաքին մէջ, մենք ալ, խաչոյին դարավերջիկ թունորդներս, կրնանք ռաքերնիս ճիշդ մէկ անգամ Մարտիրոս կամ Վիէննայի հողին դպցնելու սպասանով, երթալ Պոլսէն ի Փարիզ:

Փարիզ առաջնորդեմ ձեզ ուրեմն, բարեկամներս, քանի որ քայլափոխ մըն է հեռաւորութիւնը:

Բայց հասնելով հոս, ի Փարիզ, իմ ազնիւ բարեկամներս, առ այժմ՝ զատուե-

ցէք ինձմէ: Դուք գացէք բնակեցէք Գննալէւր. այցելեցէք Բանթէոնը, մայր եկեղեցին, մատենադարանը, Էնվալիտը, բուսաբանական պարտէզը, գացէք Մօն-Բաւնասն ու Բէռ Լաշըր (և եթէ կ'ուզէք Պոլսոյ մեր Պալլադիոյն և նոյն խի Երչիի գերեզմանատան հետ բաղդատեցէք այ հասկ-Վայքերը). արշաւներէն, մրցումներէն, թատրոններէն, անտառներէն, և ոչ մէկ բանէ զրկեցէք ինքզինքնիդ. Փարիզը սակն ու վրայ ըրէք, որպէս զի կարենաք վայելել Փարիզը... Իմ օձիքը թողուցէք սակայն. զի ես չատ կը նմանիմ չինաբնակ խաչոյին. իմ այդ նախահաւս եթէ կալ էր, ես ալ տարբեր տխրածութիւն մը ունիմ, որուն ինչըլլալը չեմ կարող զրել առ բացարձակ բայց եթէ կը հաճիք՝ կրնամ ազիկից բանաստեղծութիւն մը չինել անմիջապէս և ներկայացնել ձեզ՝ ըսելով թէ ազաղազին կուկուլիկուն թեւերու անշուշտ բաղիւստ մը, կտուցներու բացփութ մը, կոկորդի բուսն ելեւէջ մը, անձայն յորանջում մըն է՝ ի մի բան՝ ինձ համար կուկուլիկուն... ահա այս է իմ տխրածութիւնս նաեւ բանաստեղծութիւնս. կը յուսամ որ բան մը չհասկցաք բանաստեղծութենէս. ինչ ընեմ. իմ ստեղծածս այդչափ միայն կըրնայ ըլլալ:

Թողէք զիս ուրեմն երթալ հանդիլ Փարիզու պետական հիւանդանոցը, օտարներու մէջ:

Տեսնելու համար մեր ընդարձակ սրահը, մտէք դռնէն ներս. աջ կողմէ է առաջին մահճակալը, որ իր վրայ ինձ նման հայ մը կրելու առաջնութիւնն ալ ունի. յաջորդաբար կը տեսնէք ուրիշ 10 անկողին իմ կարգիս. 11 անկողին ալ ձախակողմը. հիմա գէմքերնիդ դարձուցէք այն տունին սեկից ներս մտաք. ձախ կողմերնիդ եմ այս անգամ. գիտեցէք ծայրագոյն ձախակողմը, ինձմէ՛ ալ անդին, զրեթէ զբան կից՝ շեղորմին մէջ կայ ծակ մը, ու հոն մահճակալ մը. այդ մահճակալը սոսկալի է միւր, ոչ թէ ճահով սկսելուն համար, այլ որովհետեւ ատի սահմանեալ է զիշերապահ սպասուորին, որ կը պառկի, բայց չի քնանար... պէն,

մորուք, մազեր, ընքուի, բնաւ երբէք, աւելի լեւրի քան թէ գերծեալ կ'երեւի գլխովին. կորացեալ քամակէն կը հասկընաք թէ ծերուկ մըն է, բօթ բօթ դէմքով ուսկից ժահը կը հոսի. հսկող մըն է որ զգացում չունի. մարմնացեալ օրինադիրքը հիւանդանոցին:

Իմ Գաղղիացի ախտակիցներս ցորեկները ամեն տեսակ փորձանքներ կը տեղացնեն այդ համակ սպիտակափայլ գըլխուն վրայ՝ գիշերուան խստութեանց վրէժը լուծելու մտօք. ինձ համար ամենէն ծիծաղելին է ընքուիէ զուրկ գտնուիլը. չի պատելիք բան մը չունենալով, յաճախ անկարելի կ'ըլլայ ինձ իր գէմքէն գուշակել այդ դաժան մարդուն բարկութիւնը:

Ու երբ երբեմն նա զայրացեալ դէմս կը կանգնի վիճաբանելու համար՝ բարբանջելով լեզու մը զոր չեմ հասկնար մէկէ աւելի պատճառներով, — ու երբ ես ալ փոխադարձաբար, կը բանամ Վանցիի բերանս և, «հայրն էսա մազեր, էսա պետեր... հապա՛ հոգեմ էդա զլուխդ տկուղ. դիւ ի՞նչիս կը յոխորտաս վեր ծիկ» կ'ըսեմ, — ա'լ անդ է կրճտել ատամանց և Տրակօնի օտոտոտուն մարդանքներ կատարելը մեր խեղճ գիշերապահին, որ, ընկերներուս որոտագին քահապանքէն հաւածական, կ'երթայ իր պետին դանգատիլ ինձմէ:

Այս կատակներուն ամենն ալ ցորեկները միայն ի գործ կրնանք դնել. գիշերները իր անտանելի հսկողութեան տակն ենք:

Եռկուռց՝ ահագին լամպա մը, կախուած առաստաղին կեդրոնէն, իր սաստկազոյն աստիճանով լուսաւոր. ասանկ սրահի մը մէջ Մօրֆէոս միշտ պիտի խուսափի ձեզմէ, չալիտի կրնաք ննջել. վերմակին տակ ծածկուիլը կը խեղդէ զձեզ. աչքերը կապելն ալ անօգուտ ու անբնական. պիտի տանջուիք, պիտի չըջըջիք, մինչեւ որ մարմնոյ պարտասումը գայ բռնապէս իրարու խառնել ձեր արտեւանունքը:

Վահ, վահ. իմ աջ կողմի անկողնոյն մէջ պառկող Գաղղիացին, աշխոյժ ու կը-

րակոտ երիտասարդ մը, քանի քանի անգամներ կոտորեց այդ քնարգել լամպային շէջ... Թաց լաթեր փաթթելով վրան, և այդու պատճառ ըլլալով որ մենք մինչեւ առտու քնանանք մշիկ մշիկ՝ պոռչտկող գիշերապահին քով:

Այդ լամպային խաղտեցուցիչ փայլը այնչափ չալիտի չարչարէ զձեզ՝ եթէ դուք ինձ պէս գիշերներն ալ ծխելու յոռի սովորութիւնը բարդած չէք ձեր ուրիշ բարեմասնութեանց վրայ... Ի՞նչ ընելու է, Տէր Աստուած, հոս ամեն գիշեր բերանս չորաբեկ կը մարմաչէ, բրտինքներու մէջ կը թաթխուիմ, սպասելով ակնկառոյց որ ձախ կողմիս կերպիւրոսը քնանայ, որպէս զի ես ալ սիկար մը քաշեմ գաղտնի և ըզգայարանքներս ի քուն թմրեցնեմ:

Իմ կարգինները այս մասին հանգիստ են բաղդատաբար. երբ ուզեն ծխել, վերմակէ վերմակ կը քաշեն մինչեւ իմ վերմակս. կը կռահեմ խնդիրքներն, կ'ելլեմ կը նստիմ անկողնոյս մէջ, այս նստուկ դերքովս պատուար մը շինելով այն անխոհեմ ախտակցիս համար որ կը ծխէ գիշերով. բայց ինձ համար ո՞վ պիտի շինէ պատուարը ու զիս պիտի ծածկէ, քանի որ պահապանը իմ քովս, իր արթուն աչքերը իմ վրաս է սեւեռած:

Նշանակելի է թէ հոս զիրար ձեռք չեն տար. ուղածիդ չափ կոտրէ, թափէ, ծխէ, հիւանդանոցի կանոններուն հակառակ, — քու ընկերներէդ ոչ ոք պիտի բերան տայ կանոնազանցը. տարբեր բան մըն է որ անճարակ մըն ես դուն ու սիկառը բերանդ կը բռնուիս անկողնոյդ մէջ. այդ պարագային, երբէք ներողութիւն. կէս գիշերուն կ'արտաքսեն զքեզ հիւանդանոցէն, որչափ ալ օտարական մը ըլլաս:

Կօկորդէն տառապող խեղճ մը, մեր սրահի ձախակողմէն, անցեալ գիշեր չկըրցաւ իր սիկարը պահել հսկողէն, և վայրկենապէս վռնտուեցաւ դժբաղդը:

Ինչ որ ալ ըլլայ, ես չեմ կարող տուկալ. ինձ անհրաժեշտ է աւնուաղն երկու սիկար ծխել քունէս առաջ:

Ֆրանսական 80 սանթիմնոց ծխախոտը որ՝ մեզ համար՝ մեր 30նոցէն իսկ ստորին է. և ֆրանսական առանձնաշնորհ-

եալ լուցկին որուն փոքրիկ մէկ տուփը 10 սանթիմ ըլլալով հանդերձ, վառելէ առաջ երկու երեք րոպէ ֆոսֆոր կը մխայ և հեղձամղձուկ կրնայ ընել անվարժները:

Այս ծխախոտն ու այս լուցկին քովկըս, գրասեղանիս վրայ է միշտ, ձեռքիս տակ պատրաստ. կէս գիշերուն, երբ ալ կ'երազէ մեր պահապանը, ձեռքս դադտագողի կը սարդեցնեմ դուրս, կ'առնեմ ծխախոտն ու լուցկին, վերմակը քաշելով գլխուս վրայ, կը շինեմ սիկարը, կը զարնեմ լուցկին, իրաւ է, քիչ մը խղիկ խղիկ գալով՝ բայց և այնպէս ամենայն յանձնառութեամբ կը կլլեմ ֆոսֆորը, կը վառեմ սիկարս, որուն մուկը յուշիկ յուշիկ ցրուելու համար վերմակիս վարի եզրը կը հովահրեմ ոտքովս:

Այսպէս ամառ մը չափ կըցայ շարունակ խաբէլ գիշերապահին հսկողութիւնը, երբ գիշեր մը «ծխող կայ, հասէ՛ք» աղաղակներէն ընդոտտ արթնցայ և ձախ ձեռքիս բռնուած ըլլալն զգացիւ Դո՛ւն, իմ բարի գիշերապահս, դո՛ւն ես որ սիկարան ձեռքս եղած ատեն, անզգալաբար միափեղէս օգուտ քաղել ու գիշերով նետել տալ կ'ուզես Փարիզու փողոցները, զի՛ս, օտարական մը ձեր մէջ, դո՛ւն, իմ լերկ ծերուկս:

Փայլակ մը, միտքի պէս արագ, և արդէն սիկարը նետուած է ձախակողմս, նոյն իսկ գիշերապահին մահճակալին տակ:

Ու այնուհետեւ ուրացում պարզապէս, ի գուր պետը և միւս սրահներու սպասաւորները իմ ու մօտակայ ընկերացս անկողինները, բարձերը, վերմակները խնամով պարպտեցին. ամեն ջանք պարապը գնաց՝ դտնալու համար նետուած սիկարը որ բոլորովին անակնուկելի տեղ մը, գիշերապահին մահճակալին տակ, մթին խորշ մը կեցած է հաս:

Հետեւեալ առտու միայն եղելութիւնը պատմելով ընկերներուս, հասկցայ թէ վտանգաւոր յանգագութիւն մըն է եղեր այսպէս սպասաւորին վրայէն վառ սիկարան նետելը:

Յանգանութիւն. վա՛շ, իրենց հոգն է. իրենք, երբ ծխել ուզեն, վերմակէ վերմակ կը քաշեն մինչեւ իմ վերմակս, կը

կռահեմ խնդրքնին, կ'ելլեմ՝ կը նստիմ անկողնոյս մէջ, այս նստուկ գիրքովս պատուար մը շինելով իրենց ուրք կը ծխեն գիշերով, բայց ինձ համար ո՞վ պիտի շինէ պատուարը ու զիս պիտի ծածկէ, քանի որ պահապանը, ինձ նման արեւելքցիէ մը խաբուած քինարբու պահապանը՝ իմ քովս է, իր կատղած մարդու վրէժ-խնդիր աչքերը իմ վրաս սեւեւելով այս անգամ:

ՈՍՏԱՆԻԿ

ՎԵՐՋԱԼՈՅՍԸ

Սա վերջալոյսի շողերը ինձի կը բացատրեն հրաժեշտի տխրութիւնը. հրաժեշտի տխրութիւնը իմ հոգիս ըստուերներով կը ծածկէ. ստուերները՝ զլաւարթ լոյսերէն վերջը՝ սարսուռներու կը նմանին. և սարսուռները՝ ըստուերներուն պէս պաղ ու անոնց պէս լալկան՝ հեռուունչ երգերն են՝ պատրանքին, ինչպէս համբոյրները որ կը հծեն երգերն են սիրոյ, և ինչպէս երազները որ կը խաբեն երգերն են երջանկութեան:

Տխրութիւնը զոր ունին վերջալոյսին շողերը, այն տխրութիւնը լաւ կը հասկընայ հոգիս որուն մէջն ալ վերջալոյս մը կայ:

Անոր շողերը հետզհետէ նշոյլ մը կ'ըլլան. նշոյլը կ'անօտրանայ հետզհետէ. ու մշուշ մը սեւ ու թանձր քիչ քիչ կը փրուռի, իրբեւ դամբան լոյսերուն:

Հոգւոյս վերջալոյսն ալ ոգեվար ջահի մը պլպլուքն ունի. պլպլուքը կը հալի հետզհետէ. ու արցունքի շողերը կը նշուլին վշտի մուխ ծալքերուն մէջ. և վերջապէս, քիչ քիչ, կը հատնին այդ խոնաւ շողերը: Անկէ ետքը, մահուան մոտածումը կը սողայ այն տարտամութեանը մէջ որ դեռ կ'ապրի գերեզմանին շուրջը, ինչպէս նայուածքը որ դեռ կը թափառի մաշած աչքերու խոր ու մռայլ փոսին եզրը:

ՀՐԱԺԵՅՏԸ

Ազամանդէ նուրբ ժապաւենի մը վրայէն, ժապաւենի մը նուրբ ինչպէս արեւուն մէկ ճառագայթը, իմ երազներս կը սլանային. կը սլանային իմ երազներս նուրբ փալիւտն ժապաւենի մը վրայէն որ քու սրտիդ մէջէն կ'երկարուէր մինչեւ անհունը:

Մինչեւ անհունը կ'երկարուէր այդ ժապաւենը. և դուն բրցուցիր զայն:

Գուն զայն մէջտեղէն բրցուցիր, ինչպէս կը բրցնեն քու մատներդ ծաղիկն իր ցօղունին մէջտեղէն. և նուրբ առածդական ժապաւենին մէկ մասը սուրաց կըծկուեցաւ անհունին մէջը, և մէկտը մասը կ'ծկուեցաւ քու սրտիդ մէջը:

Քու սրտիդ մէջը, ժապաւենին բրգած այդ մասը պիտի մնայ յաւիտեան, ինչպէս խալթ մը խղճին մէջ, ու պիտի յիշեցնէ քեզի իմ երազներս որ կը սլանային երբեմն նուրբ փալիւտն ժապաւենին վրայէն, զոր դուն բրցուցիր:

Հիմայ, ու ասկէ վերջը, ա՛լ պիտի չը տեսնես իմ երեսիս վրայ այն զուարթ ճառագայթումը՝ զոր երջանիկ սէր մը կը ցոլացնէր անոր. այն զուարթ ճառագայթումէն վերջը, հիմայ մութցաւ իմ ջինջ գէմքս. և ակօսներուն մէջ՝ զոր ցաւը դժեց անոր վրան՝ պիտի հոսի արցունքը, պիտի հոսի անիկա մինչեւ այն փոսին մէջ զոր կը փորէ զժբախտ սէր մը, արցունքս պիտի հոսի մինչեւ այն փոսին մէջ ուր գիտի մը կը պակսի լուի:

ՎԱՀԱՆ ՄԱԼԻՋԵԱՆ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Վեհ. Սուլթանը բարեհաճած է հետեւեալ պատուանշանները շնորհել. երկրորդ կարգի Մէճիտիյէ՝ Էջմիածնի Սինոդի անդամներէն Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի և Սարգիս եպիսկոպոս Գաս-

պարեանի. երրորդ կարգի Մէճիտիյէ՝ Տ. Մեսրոպ և Տ. Եփրեմ արեղաներուն, ինչպէս նաեւ Յակոբ Մ. վարդապետ Աշոտ Փախազեանի:

—Էջմիածնի Սինոդին անգամ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանց և Սարգիս եպիսկոպոս Գասպարեան ինչպէս նաեւ Մեսրոպ ու Եփրեմ արեղաները անցեալ ուրբաթ ներկայ գտնուեցան Սէլամըքի հանդէսին և սենականապէս էմին պէյի միջոցաւ արժանացան կայս. մեծարանքի: Նոյն օրը այցելեցին Տատեան վսեմ. Յարութիւն վաչային և Կեղրոնական վարժարանն: Շաբաթ օրը Սկիւտար երթալով այցելեցին Իզմիրեան սրբազանին, Ս. Կարապետ եկեղեցին և Ս. Խաչ եկեղեցին: Յետոյ, Պոլսոյ-Կոլմն անցնելով այցելեցին Չինլի քէօզի գեղարուեստից և հրնութեանց թանգարանը և ալ նշանաւոր վայրեր: Երեքշաբթի օրը ուստական Չէլչոգենաւով մեկնեցան մայրաքաղաքէն Երուսաղէմ:

—Ազգ. նախակրթարաններու բննիչ յանձնաժողովը, կանխագոյն ծանուցման համեմատ, կիրակի օրն իր առաջին նիստը կազմեց Ղալաթիոյ խորհրդարանին մէջ և կարգ մը նախապատրաստական գործողութիւններէ ետք՝ հետեւեալ կերպով կազմեց իր գիւտնը.

Յովհաննէս Էֆ. Թորոսեան Առաջագետ

Միհրան » Ասքանազ Առաջագետ

—Կիրակի օրը, Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցին մէջ, Ալէաթ ճեման սրբազան քահանայ ձեռնադրեց ծանօթ ուսուցիչ Պ. Բարսեղ Էնքսէրճեանը որ կոչուեցաւ Տ. Հմայեակ: Նմանապէս քահանայ ձեռնադրեց Գարակէօմիլի վարժարանին հայերէնի ուսուցիչը, որ կոչուեցաւ Տ. Վահրամ:

—Կիրակի օրը, Սկիւտարի թատրոնին մէջ տեղի ունեցաւ Դուրեանի Թաթառ տնուն թատերախաղին ներկայացումը տղանկալուած յաջողութեամբ, Մնակեան թատերախումբին կողմէ: Ողբացեալ բանաստեղծին ջերմեանը համակրողներ ամեն կողմերէ վազած եկած էին՝ ճաչակելու համար անոր թատերական տաղանդին ալ բուրումնաւէտ հիւսիս: Տեսնուի ծափերով իջաւ վերջին վարագոյրը:

—Իզմիրի հայ վարժարաններու տնօրէն Պ. Տէր Միրաքեանց հրաժարելով այդ պաշտօնէն, զոր հինգ տարիէ ի վեր կը վարէր, ուսուցչական պաշտօն ընդունելու է Գէորգեան ճեմարանին մէջ և արդէն մեկնելու է:

—Իզմիրի Ազգ. վարչութեան ծախքով երկու երիտասարդներ որք տեղւոյն վարժարաններուն մէջ ուսում առած են, զըրկուսն էն ի Ֆրանսա, Թուրքի վարժապետանոցին մէջ իրենց ուսումը կատարելագործելու և ուսուցչական արուեստը սորվելու, զոր ապա ի գործ պիտի դնեն Իզմիրի վարժարաններուն մէջ և իրենց ստանալիք թոշակէն մաս մաս պիտի վճարեն իրենց համար եղած ծախքը: Գովելի նախաձեռնարկ:

—Երուսաղէմի պատրիարքական փոխանորդ Սիմէոն արքեպիսկոպոս Սէֆէրեան, Տ. Յարութիւն Պատրիարքին մէկ հեռագրին վրայ, երեքշաբթի օրը Երուսաղէմ ուղեւորեցաւ ռուսական Զեւալէֆ շոգէնաւով:

—Յունաց Եկեղեցւոյն հիւանդանոցին խնամակալ տիկինները երեքշաբթի օրը այցելեցին մեր հիւանդանոցը:

—Կտակաց հոգաբարձութիւնը իր չորեքշաբթի օրուան նիստին մէջ զբաղեցաւ հանգուցեալ Գարեգին եպիսկոպոսի կտակին խնդիրովը, հանգուցեալին եղբայրներուն ու եղբորորդիներուն ներկայութեանը, որք պնդեցին իրենց առաջարկութեան վրայ, այն է կտակուած դրամը տոկոսի դնել և կրկնապատկելէ յետոյ նպատակին գործածել: Հոգաբարձութիւնն ալ կարծիք յայտնեց թէ պէտք է անմիջապէս գործադրել հետեւապէս որոշեց իր սոյն կարծիքը տեղեկագրել ազգ. վարչութեան:

—Բնիկ Հասգիւղցի Սարգիս Էֆ. Մ. Միստսեան, որ ժամանակէ մը ի վեր Ամերիկայի Պրուքլին քաղաքին մէջ հաստատուած է, փափաք յայտնել է 700 ոսկինոց խանութ մը, որ կը գտնուի Ղալաթիա, նուիրել Հասգիւղի եկեղեցիին, հասոյթը Ներսէսեան վարժարանին յատկացուելու պայմանով: Կտակաց հոգաբարձութիւնը հարկ եղած գործողութիւն-

ները կատարած և կալուածը սոյն եկեղեցիին վրայ դարձուցած ըլլալով, այդ կտակն հաղորդեց Տնտեսական խորհուրդին, վաւերացման գործողութիւնը կատարուելու համար:

—Ռուսիոյ պետական խորհրդական Պ. կարապետ Եզեանց բարձրագոյն հրամանով անդամ կարգուած է կրթական նախարարութեան խորհուրդին:

Ն Ե Ր Ք Ի Ն

Խորիւ Բարձր. Ապպաս փաշա հինգշաբթի իրիկուն իր հետեւորդներով մեկնեցաւ մայրաքաղաքէն Եգիպտոս: Յատուկ շոգէնաւով մըն ալ մեկնեցաւ Ահմէտ Մուխթար փաշա:

—Երուսաղէմի խախամապետը, Եւրոպիոյ հրեայ սեղանաւորներուն առատաձեռնութեանը կոչում ըրած է օդնելու համար Երուսաղէմի մէջ հաստատուած աղքատ հրեայ դպրականներուն:

—Եգիպտական բանակի զօրավարներէն Զօհրապ փաշա իր կնոջ հետ մայրաքաղաքս եկաւ և հիւրընկալուեցաւ Սըր Ալֆրէտ Սանտիսընի ամաւանոցն, ուր քանի մը շաբաթ մնալէ ետք՝ Պրուսա պիտի ուղեւորի ամրան մնացեալ մասն անցունելու:

—Աղեքսանդրիոյ առաջնակարգ վաճառականներէն Աղարեսոն և Վաֆիատաքիս տունը, որ մասնաւորապէս ծխախոտի վրայ գործ կ'ընէր, իր վճարքը դադարեցուցեր է յիսուն երկու հազար ոսկի բացով:

—Վիեննայի գերմանական Կալէքը ի վեր կը հանէ այն բազմութիւն առաւելութիւնները զորս Կորնթոսի պարանոցին բացումը պիտի ունենայ Աւստրիոյ-Հունգարիոյ վաճառականութեան համար, որովհետեւ այդ ջրանցքը 16 ժամ պիտի պակսեցնէ Թրիէսթէէն ի Պոլիս կամ յիզմիր ուղեւորութեան տեւողութիւնը: Բայց, կը յարէ Վիեննայի լրագիրը, Յունաստան է մանաւանդ որ օգուտ պիտի քաղէ և շատ ցուալի է որ այդ ջրանցքը որ 11 տարուան աշխատութեամբ և բազմաթիւ դժուարութեանց յաղթելով շինուած է, միշտ և միշտ կը յետաձգուի:

—Երկրագործութեան, հանքերու եւ անտառներու նախարարութիւնը որոշեր է հանքերու մասնաւոր վարչութիւն մը հաստատել Պալըքէսէրի գաւառակին մէջ, որ Թուրքիոյ ամենէն բազմաթիւ եւ ամենէն հարուստ հանքերն ունի իր մէջ: Այս որոշումը ընդունուած է Բ. Դոնէն եւ վաւերացուած կայս. իրաւէով:

—Կ'ըսուի թէ Բերայի մէջ հիւանդանոց մը պիտի շինուի իբրեւ մասնաճիւղ Եէաիբուլէի Յունաց հիւանդանոցին: Խօսք կայ թէ Պ. Նիքոլա Զարիֆիի կինը տիկին Էլէնի, 35,000 օսմ. ոսկի պիտի տայ այդ հիւանդանոցին շինութեան եւ տեղական ծախքերուն համար:

—Պոնկուքի վաշայի առաջարկութեան վրայ, կառավարութիւնը որոշեր է քոլերայէ վարակեալ նահանգներու շրջակայ զանազան վայրերը զրկել առողջապահական յանձնախումբ մը, որ ձեռքին տակ ունենայ ամենէն կատարելագործեալ միջոցները, հակառակելու համար այդ վայրերը: Յանձնախումբին առաջնորդութիւնը յանձնուած է Տր. Մուսթաֆա Էֆէնտի, որուն օգնական արուած է ըլլալ իւր վրայ: Երկու պատուիրակները երկուշաբթի մեկնեցան Իսկէնուէրուն, Մախսուսէի շոգենաւով: Իսկէնուէրունէն յետոյ, պիտի այցելեն յաջորդաբար Հալէպ, Մէսքէնէ եւ Եփրատի ամրոցը հովիտը մինչեւ Պատրա: Այս վերջին քաղաքին մէջ է որ պատուիրակութիւնը ամենէն աւելի գործ պիտի ունենայ եւ աւելի երկար պիտի մնայ:

—Սալահ կը ծանուցանէ թէ Արմասնցի Օհանոյլու հաճի Գալուստ, Զաքար, Գէորդ, Ակնեցի Ճանիկ, Ակնեցի վարդապետօյլու Ղուկաս եւ Արապկերտի Դրիգոր անուն աւագանիներն, որ Քալուսայ գաւառակին շրջանացը պատուած քաղաքի մը մէջ ապաստանած էին, ձերբակալուեր են: Ասանցի Գրիգոր պատուած ձերբակալուեր է Լաւրա վերանորոգել իսկ միւսները՝ ողջ:

—Իզմիրէն մեկնող նաւերուն համար տասնօրեայ քարանձիռա հաստատուած է:

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Պ. Բապի, Ֆրանսայի ղեկաւորն ի Պանկքօք, չորեքշաբթի օրը նաւ մտաւ ու մեկնեցաւ:

—Սիամի ծովային պաշարումը սկսաւ անցեալ ուրբաթ օր: Սիամ պաշարուած հրատարակուելով ոչ մէկ ազգի առեւտրական կամ պատերազմական նաւ պիտի կարենայ մօտենալ Սիամի:

—Ֆրանսական բոլոր թերթերը միահամուռ կը մերժեն Անգլիոյ միջամտութիւնը Սիամի գործերուն մէջ. կը յորդորեն կառավարութիւնը պահպանել Ֆրանսայի իրաւունքները կարելի եղած ամէն միջոցներով:

—Ֆրանսայի Նախարարաց խորհուրդը որոշեց որ Պանկքօքէն մինչեւ Սիամի վաւերացր ռզդէնութեան պահուն եթէ Ֆրանսացիներու դէմ ո' եւ թշնամական ցոյց կատարուի, անմիջապէս փոխարինութիւն պիտի ըլլայ:

—Լոնտոնէն կը հեռագրեն յուլիս 8/20 թուականով որ այդ օրը գումարուած նախարարաց խորհուրդը շատ հաւանօքէն որոշած ըլլայ հրամայել Հոնկքօքի բրիտանական նաւախումբին՝ օգնութեան նաւեր զրկել Պանկքօքի առջեւ կեցող անգլիական նաւերուն:

—Կ'երեւի թէ Գերմանիա եւս Սիամի խնդրին մէջ կ'ուզէ մտնել: Պէրլինէն կը հեռագրուի թէ Գերման կառավարութիւնը կը մտադրէ Սիամ զրկել մէկ երկու պատերազմական նաւ պաշտպանելու համար Գերմանացիներու ջահերը:

—Պանկքօքէն կը հեռագրեն Թայպի թէ Ռուսիա Սիամին հարցուցած է թէ կ'ուզէ՞ Ռուսիոյ թնոլը Սալանկա կղզիները, որք պիտի յատկացուին ռուսական նաւատորմին կայան մը ըլլալու:

—Յուլիս 22ին, Խոնէ կղզիին (Սայկոն) Ֆրանսացի հրամաւորն արշաւանք մը ըրաւ Սիամցիներուն դէմ: Կռիւն երեք օր տեւեց: Ֆրանսացիք չորս բերդի տիրեցին: Սիամցիներուն կորուստն է երեք հարիւր մեռեալ եւ երկու հարիւր վիրաւոր:

—Վիլհէլմ կայսրը ծանուց Լոնտոնի գերմանական դեսպանին որ օգոստոս 1ին հոն պիտի հասնի Բաուի նաւաբշտին ներկայ գտնուելու համար:

ԱՐՏՈՒՍԱՏԻՐ

Ա. Ս. ԻՐԱՆԻԱՆՈՒՆ

Ի Տպարանի ԱՐՆԻՆԻՔԻ ԵՒ ՄԱՍԻՍ Լրագրաց